ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾՐ ԷԹՈՌՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԹԵՄԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Դեկտեմբերի 27-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն ընդունեց Արագածոտնի թեմի նորաստեղծ Խորհրդի և եկեղեցական դասի անդամներին՝ թեմական առաջնորդ Նավասարդ վրդ. Կնոյանի գլխավորությամբ:

Նավասարդ վրդ. Կնոյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նորաստեղծ թեմական խորհրդի աշխատանքային ծրագրերը, մասնավորապես Առաջնորդարանի վերանորոգչական աշխատանքների ընթացքի և ավարտից հետո այնտեղ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հոգևոր, գիտական-կրթական և մշակութային կենտրոնի գործունեության նախատեսված ծրագիրը:

Վեհափառ Հայրապետը մեծ ուրախությամբ ողջունեց թեմական խորհրդի ծնունդը և, հաջողություններ մաղթելով նրանց ձեռնարկներին, իր հայրական խորհուրդները տվեց հատկապես Մաշտոցի կենտրոնի գործունեության և թեմի եկեղեցիների վերանորոգման և վերականգնման ուղղությամբ:

Հանդիպմանը ներկա էին Արագածոտնի մարզպետ Հրաչյա Գրիգորյանը, որը թեմական խորհրդի պատվավոր անդամ է, և Աշտարակի քաղաքապետ Կարեն Գևորգյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ